ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

N 09.07.2015թ. ԿՆՔՎԱԾ ԴՏԻԳ-ՇՀԾՁԲ-15-11/6-3

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Ք. Երևան <<02>>__10__ 2015թ.

Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության աշխատակազմն ի դեմս աշխատակազմի ղեկավար **Արմեն Գևորգյանի**, որը գործում է Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ՄԵՅՍԻՍ ԻՆՖՈՐՄԵՅՇՆ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Արմեն Մանուկյանի** (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ՝ **Կողմեր**), ղեկավարվելով պետական կարիքների համար գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և հիմք ընդունելով **09.07.2015թ. Կողմերի** միջև կնքված թիվ **ԴՏԻԳ-ՇՀԾՁԲ-15-11/6-3** գնման պայմանագրի 7.1 և 7.3 կետերը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին.

1.ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. **09.07.2015թ.** Կողմերի միջև կնքված թիվ **ԴՏԻԳ-ՇՀԾՁԲ-15-11/6-3** գնման պայմանագրի 7-րդ բաժնում ավելացնել 7.1.1 կետ՝ հետյալ բովանդակությամբ՝ <<Կատարողը ստանձնում է սույն պայմանագրի N1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների ռեգիստրի և գործընթացների ավտոմատացված կառավարման միասնական համակարգի երաշխիքային և ետերաշխիքային սպասարկման ծառայությունների իրականացումը, ընդ որում՝ երաշխիքային սպասարկումն իրականացվում է 2015 թվականի հոկտեմբերի 2-ից(ներառյալ) մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը(ներառյալ): Երաշխիքային սպասարկումը Կատարողը պարտավոր է իրականացնել անվճար: Ետերաշխիքային սպասարկման ծառայությունների իրականացման համար Կողմերի միջև փոխադարձ համաձայնությամբ կնքվում է համապատասխան ծառայությունների գնման նոր պայմանագիր: Երաշխիքային սպասարկման ծառայությունները ներառում են հետևյալ հիմնական սկզբունքները՝

- ապահովել համակարգի անվտանգությունը չարտոնագրված մուտքերից

- ապահովել տվյալների պերիոդիկ արխիվացումը և անհրաժեշտության դեպքում վերականգնումը արխիվից
- իրականացնել գործող համակարգի աշխատանքի ընթացքում առաջացած ծրագրային խափանումների ուղղումը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է **09.07.2015թ. Կողմերի** միջև կնքված թիվ **ԴՄԻԳ-ՇՀՄՁԲ-15-11/6-3** անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ **09.07.2015թ. Կողմերի** միջև կնքված թիվ **ԴՄԻԳ-ՇՀՄՁԲ-15-11/6-3** գնման պայմանագրով Կողմերի ստանձնած իրավունքներն ու պարտականություններն թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է **2(երկու) էջից**, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկական օրինակ:

3. *Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Արդարադատության նախարարության աշխատակազմ	**«ՄԵՅՍԻՍ ԻՆՖՈՐՄԵՅՇՆ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ**
Ք. Երևան, Հալաբյան 41ա	**ք. Երևան, Դ. Անհաղթի 23/22**
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	**«Ամերիաբանկ» ՓԲԸ**
հ/հ 900011002764	**հ/հ 1570003653770100**
ՀՎՀՀ 02506264	**ՀՎՀՀ 01555207**
	էլ. հասցեն՝ info@masys.am
	Հեռ. (010)209100 (093)435557
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.